

## ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆ

### ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ

*Պատմական գիրությունների դոկումենտական համակարգության մասին պատմությունները՝ կամ պատմության առաջնային գործառնությունները*

## ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐԾԱՎԱՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ԴԱՅԱՍՏԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՄ

*Lignages d'Outremer / Introduction, notes et édition critiques par Marie-Adélaïde Nielsen, Paris 2003, p. 254 (Documents relatifs à l'Histoire des Croisades publiés par L'Academie des Inscriptions et Belles-Lettres. XVIII).*

Անդրծովյան ազգատոմներ / Առաջարանը, ծանոթագրությունները և բնագրերի գիտական հրատարակությունները՝ Մարի-Աղելահի Նիելիճի, Փարիզ 2003, 254 էջ (Խաչակրաց պատմության առաջնային գործառնությունները՝ հրապարակված Արձանագրությունների և դասական բանասիրության կաճառի կողմից. ԺՀ):

Մարի-Աղելահի Նիելիճի կողմից մեկ գրքի մեջ հավաքվել են Խաչակրաց պետությունների իշխողների, այսինքն՝ անդրծովյան ազգատոմների սերունդների ազգաբանության ցանկերը, որոնց մեկ խմբագրությունը, որպես հրապարական հուշարձանի հատված, մասսամբ տպագրվել է դեռևս ԺԹ դարի առաջին կեսին (1843 թ.) «Խաչակրաց պատմիչների հավաքածոյի» (Recueil des historiens des croisades) հրավունքի (Lois) հատորում: Այն մաս է կազմում Երրուսաղեմի Ասիզներում (Assises de la haute cour) հրապարակված Հովհաննես Իբելինի գրքի (Livres de Jean d'Ibelin): Հիշատակված բնագիրը համապատասխան ուշադրության չի արժանացել պատմաբանների և հասարակագետների կողմից, քանի որ հետազոտողները չեն տեսել Ազգաբանական այդ ցանկերի և Երրուսաղեմյան Ասիզների միջև եղած կապը:

Բնագրագետ-վավերագրակետ Մ.-Ա. Նիելիճն իր գրքի սկզբում շնորահակալություն է հայտնում նրանց, ովքեր օգնել և խրախուսել են նրան հրատարակելու ներկա աշխատությունը:

Նախարանում, որի հեղինակը հնատիտուտ-կաճառի անդամ ժան Ռիշարն է, նա պատմական ակնարկով անդրադառնում է Խաչակրաց պատմիչների շարքի հրավունքի երկու հատորների հրատարակության պատրաստման դժվարություններին և հետազայտմ այդ գրքերի հետազոտության բնագավառում գիտության ձեռքբերումներին, ցուց է տալիս, որ հետազոտողները (Բ. Գերար, Ա. Բոյն, Մ. Գրանդկլոդ, Ժ. Ռենկուրա, Ժ. Պրավեր, Մ. Գրայլսամեր, Պ. Էղբյուրի), սկսած 1815 թ., բազմիցս անդրադառն են Երրուսաղեմի Ասիզների ձեռագրերին և նրանց խմբագրություններին, սակայն համապատասխան ուշադրություն չեն հատկացրել այդ ժողովածովի մեջ պահպանված Խաչակրաց Արևելյան ազգաբանական ցանկերին՝ համարելով այն պակաս ուշագրավ և անհամապատասխան

իրավական ժողովածուի բնույթին: Այս առողմով է ժամ Ռեշարն արժևորում տիկին Նիելինին հրատարակությունը, որ առաջին անգամ ցույց է տրվում այն միջավայրը, որտեղ ստեղծվել են Երուսաղեմյան Ասիզմերը: Աշխատանքի առավելություններից մեկն է այն է, որ նետինակը կարողացել է նաև զանազանել այդ ցանկերի տարրեր խմբագրությունները, գտել այլալեզու տարրերակներ և զուգադիր հրատարակությամբ ընթերցողին է ներկայացրել Մերձավոր Արևելքի խաչակրաց արքունիքների ողջ բազմազանությունը՝ հատկապես շեշտելով այդ բնագրերի մեջ հայերենով պահպանված երկի կարևորությունը, որն ամեկանած հրատացնում է հատորը: Ժ. Ռիշարը հատկապես արժեվորում է Տ. Նիելինի կազմած մանրամասն անվանացաները, որը ընդգրկված են մինչ այս անհայտ պահատառերի և ասպետների անուններ, տեղանուններ, շնորհիվ որի ընդլանվում են մեր գիտելիքները խաչակրաց Արևելքի տիրապետող դասակարգի մասին և բանալի դառնում բազմաթիվ միջնադարյան բնագրերի և վավերագրերի ընկալման համար:

Մ.-Ա. Նիելինի գիրը բաղկացած է առաջարանից, հրատարակության սկզբունքների պարզաբանումից, բնագրերից, օգտագործված գրականությամ և հատուկ անունների ցանկերից: Առաջարանը վերնագրված է. «Երուսաղեմյան Ասիզմերին անծանոթ մի գիրը. Անդծովան ազգատումներ» (Un livre méconnu des Assises de Jérusalem: Les lignages d'Outremer): Այս հատվածի սկզբում նետինակն անդրադանում է Երուսաղեմյան Ասիզմերի ստեղծման պատմությանը, բովանդակությանը և նրա մեջ ընդգրկված գրքերին, որոնք վերջնական տեսքի են բերվել ԺԳ դարի երկրորդ կեսին Կիպրոսում (դրանք մեզ են հասել Քիմնականում լատինականու և հին ֆրանսերենով): Հետինակն անդրադանում է նաև իրեն հետաքրքրող իրավաբանական երկի տարրեր խմբագրությունների հիտակերեն (թարգմ. Փլորիդ Բուատրոն, ԺԵ դ.), հունարեն (Պելեպոնեսյան Ասիզմեր, ԺԳ դ.), հայերեն (Անտիոքի Ասիզմեր, թարգմ. Սմբատ Գումանտարյալ)<sup>1</sup> միջնադարյան թարգմանություններին և դրանց հետազոտություններին (Էջ 11-14): Հետինակն անդրադանում է Երուսաղեմյան Ասիզմերի մաս կազմող խաչակրաց պետությունների արքունիքների գավազանագրքերի բնագրերի հրատարակություններին և հետազոտության պատմությանը (Էջ 14-20): Ենելով, որ միայն Վատիկանի թ. 7806Ա ձեռագրում և հայ մատենագրության մեջ է այն առանձնացվել իրավաբանական Մայր երկից (Էջ 19): Այսուհետև տիկին Նիելինը ըննում է այդ ցանկերի նետինակի հարցը՝ ենթարկելով, որ դրանց հնագույն խմբագրությունն կազմված է 1265-1270 թթ. միջև և բազմաթիվ թելերով կապված է Երուսաղեմի Ասիզմերի մաս կազմող Հովհաննես Իբելինի իրավաբանական ժողովածուի հետ, որի ստեղծման միջավայրի (Իբելին ընտանիքի հետառողջների մի քանի սերմնի) հետ էլ կապվում է նրա ստեղծումը (Էջ 20-25): Հովհաննես Իբելինին էլ տիկին Նիելինը համարում է Ազգաբանական ցանկերի հետինակ:

Մեզ հետաքրքրող բնագրի խմբագրություններն ունեն թե՛ քանակով և թե՛ բովանդակությամբ միմյանցից տարրերվող զիսաբանումներ, երբեմն էլ նոյն թագավորական կամ իշխանական ընտանիքի մասին պատմող հատվածը հիմնովին տարրերվում է մյուս

<sup>1</sup> Այստեղ, իմարկե, պետք է նկատի ունեմալ, որ Անտիոքի Ասիզմերի բնագիրն ուղղակիորեն չի սերում Երուսաղեմյան Ասիզմերից: Անտիոքի Ասիզմերի հմբաւահպությամ աղբյուրը, իմ կարծիքով, նորմանական իրավունքի սկզբունքներն են, որ դրված են այդ հուչարձամի հիմքում:

տարրերակներից տեղեկությունների ծավալով և բովանդակությամբ: Սակայն մի քանչնիանոր է, այս բոլոր խմբագրություններում տրվում են Խաչակրաց Արևելքի թագավորական (Երուսաղեմ, Կիպրոս, Կիլիկյան Հայաստան) և իշխանական (Անտիոք, Եղեսիա, Տրիփոլի, Սիդոն, Պաղեստինյան Կեսարիա) ընտանիքների տոհմածառերը, ընտանիքի անդամների, ճրանց փեսաների ու հարսների գրեթե լիակատար հիշատակումով: Այս հանգամանքն էլ ցույց է տալիս, որ մեզ հետաքրքրող ցանկերը կազմվել են գրավոր (Հնտարական վավերագրեր, դատական արձանագրություններ, պատմական երկեր) և բանավոր (ընտանեկան ավանդություններ, հրաշապատում գրուցներ) սկզբանադրյուրների համակցությամբ: Երկի տարբեր խմբագրությունները շուրջ երեք հարյուր հիսուն տարի ընդգրկող ժամանակամիջոցի համար (1099-1459 թթ.) պատճեն են շուրջ 1000 անձնավորություն, որոնց անունները զանազան ձևերով են վկայված յուրաքանչյուր տարրերակում, որոնք տիկին Նիկղինը ծանոթագրություններում և ցանկերում փորձել է միասնական տեսքի բերել: Հեղինակը դժվարությունների առաջ է կանգնել այն դեպքերում, երբ հիշատակվել են մինչ այս վավերագրերում և գրականության մեջ չհիշատակված գործիքներ, մանավանդ, երբ խոսքը վերաբերում է ոչ հայտնի ընտանիքների (Կելմոն, Բուֆլը, Պեղո, Բուտրվին և այլ) հետ ամուսնական կապերին (Էջ 25-30): Հաճախ հարկ է եղել պարզել, թե տվյալ ընտանիքի անդամն ի՞նչ ծագում ունի և ե՞րբ է հայտնվել Խաչակրաց Արևելքում:

Իր աշխատանքի հաջորդ մասում տիկին Նիկղինը անդրադառնում է իրեն հետաքրքրող բնագրի տարրերակներին, փորձում է պարզել երկի ժամրային պատկանելությունը (Էջ 32-40): Երկի առաջին խմբագրության, որի հնագույն՝ վեճեստիկյան ձեռագիրն ուսումնասիրող թվագրում է ժ-գ դարի 60-70-ական թթ., և երկրորդ (հնագույններն են Վատիկանի լատիներեն և հիտալերեն ու Երևանի հայերեն մատյանները) տարրերակի միջև կաշուրջ 50 տարվա ընդմիջում: Ի տարրերություն լատինալեզու տարրերակների, պահպանված հայերեն բնագրի հեղինակը Հեթում Ա թագավորի զարմիկ, Կոռիկոսի իշխան Հեթումն է, որի հորաքուր Մարին Հովհաննես Իրելին կիռ է եղել (Էջ 35): Այս տարրերակի ստեղծման տարեթիվը ևս հստակ է՝ 1296-1306 թթ. միջն, քանի որ, ըստ տիկին Նիկղինի, Հեթումն այն կազմել է իր իսկ շարադրած ժամանակագրությունից<sup>2</sup> անմիջապես հետո, հայկական միջավայրի կարիքների համար, և չի հիշատակել ո՛չ Լևոն Գ-ի թագադրումը<sup>3</sup>, ո՛չ էլ 1307 թ. սպանությունը: Հեղինակը իր երկի մեջ ընդգրկում է Կիլիկյան Հայաստանի, Երուսաղեմի, Կիպրոսի թագավորական ընտանիքների և Անտիոքի իշխանության ազգարանական ծառերը, որոնցից երուսաղեմա-կիպրոսյան ցանկերը շատ են մոտենում Վատիկանի թ. 4789-ի հին ֆրանսերեն տարրերակին, անտիոքյան հատվածում կամ որոշակի

<sup>2</sup> Այս ժամանակագրության կրնատ տարրերակը և Ազգարանունը վերջին անգամ հրապարակվել է Վազգեն Հակոբյանը (Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. / Կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, թ. II, Երևան, 1956, էջ 33-93, 94-114): Ժամանակագրության ամբողջական բնագիրը և ազգարանական ցանկերի հայերեն տարրերակը վերստին հրատարակության ներ պատրաստում, գուգադի ֆրանսերեն թարգմանությամբ: Մեր տրամադրած այս անտիոք Անտիոքն էլ իր գործում օգտագործել է տիկին Մարին-Աղունին Նիկղինը՝ շնորհակալություն հայտնուվ Կոռող Մութաֆյանին և Արա Կիլիկիա ընկերությանը (Էջ 6) ու ֆրանսերենի թարգմանիչ Հասմիկ Մկրտչյանին (Էջ 131, ծան.):

<sup>3</sup> Պատը է ճշտել, որ Լևոն Գ-ը թագադրվել է 1306 թ. Բուլիսի 30-ին (տե՛ս W.H.Rüdt-Collenberg, The Rupenides, Hetumides and Lusignans: The structure of the Armeno-Cilician Dynasties, Paris, 1963, p. 74, n.177):

նորություններ, իսկ կիլիկյան մասն ամբողջովին ինքնուրուց է և ավելի շատ նմանվում է ժամանակագրության (Էջ 37-38): Պակաս հետաքրքրություն է Աերկայացնում Ազգարանական ցամկերի երրորդ տարբերակը, որի հճագույն կրողն է մյուխնեմյան ձեռագիրը, որը սերել է ԺԴ դարի սկզբի կիպրական մի ազնվականի իտալերեն կամ ֆրանսերեն ընդօրինակությունից (Էջ 38): Ասպա հեղինակը Աերկայացնում է բնագրի անցած ճանապարհը. Հովհաննես Երեխին ժողովածու (1260-1270-ական թթ.), 1305 թ. ամբողջական ժողովածու, մասնակի հայերեն թարգմանություն (1306)<sup>4</sup>, Պոլ Կաստրոսիոյի (1344 թ.) տարբերակը, Պիետ Ֆլորիի (1398 թ.) խմբագրությունը, 1459 թ. Սիմոն Երուսաղեմացու ընդարձակումը:

Աշխատանքի վերջին հատվածում հետինակը նկարագրել է իրեն հետաքրքրող բնագիրը պարունակող բոլոր ձեռագրերը (Էջ 41-51): Հետևելով Մ. Գրանդկլոդի հետազոտությանը<sup>5</sup>, Մ.-Ա. Նիկղին Աերկայացնում է Փարիզի Ազգային գրադարանի թ. 19026, Վեճետիկի Մարկոսան գրադարանի ֆր. ֆոնդի հավելված թ. 20/265, Վատիկանի գրադարանի լատ. թ. 4789, Մյունիսենի քաղաքային գրադարանի գալլիկան թ. 771, Կարպենտրասի քաղաքային գրադարանի թ. 1789, Փարիզի Ազգային գրադարանի Դուպուի ֆոնդի թ. 652, Փարիզի Ազգային գրադարանի ֆրանսիական ֆոնդի թթ. 1078, 1077 և 12206, Փարիզի Ա. Ժենեվիեվի գրադարանի թ. 778, Թրուայի քաղաքային գրադարանի թ. 24, Վատիկանի գրադարանի լատինական ֆոնդի թ. 7806A. Մաշտոցի անվան Մատենադարանի (=ՄՄ) թ. 1898 մատյանների բովանդակությունը և հնագրական յուրահատկությունները:

Տիկին Նիկղին հրապարակած առաջին բնագիրը Վեճետիկի Մարկոսան գրադարանի 20(265) ֆրանսերեն ձեռագրում պահպանվող ազգարանական ցամկն (Էջ 60-84) է, որ տրվում է Երեխին ընտանիքի ծննդաբանությունը՝ սկսած ԺԲ դարի Երրորդ Կեսից մինչև ԺԳ դարի երրորդ տասնամյակը: Երկրորդ բնագրի հիմքում Վատիկանի 4789 մատյանն է, որը բերվում է Երուսաղեմի, Կիպրոսի և Հայոց թագավորների, Անտիոքի դուքսերի, Տրիպոլիի իշխանների, Երեխինների, Թաքարիայի, Սայետիայի, Կեսարիայի, Բեյրութի, Սեյսուայի, Մելքոնտի, Թորոնի, Բեսանի, Ռոբայի, Ջիբլի, Մարեկլի, Մարզայի, Բուտրոնի, Աղելուայի, Մոգաստիոյի, Կայփայի և այլ իշխանությունների ազգատոմների Ակարագրությունները (Էջ 85-129): Մաշտոցի անվ. Մատենադարանի թ. 1898 ձեռագրում պահպանված ազգարանական ցամկը վերաբերում է Ռութինյան ու Հեթումյան թագավորական տների, Երուսաղեմի և Կիպրոսի արքաների, Անտիոքի դքսության ազգարանությանը (Էջ 131-147): Մյունիսենի գալլիկան թ. 771 ձեռագրից ընդօրինակված ազգարանական ցամկը պարունակում է Երուսաղեմի արքաների տիտղոսը կողո իշխողների գավազանագիրը (Էջ 149-152): Սկսած Գոդֆրուա Բովոնացուց մինչև Շաոլու թագուհի (ԺԵ դար): Վերջին բնագրի հիմքում ընկած Վատիկանի լատիններեն թ. 7806A մատյանը տալիս է Անդրծովյան ազգատոմների ցամկերը՝ սկսելով Երուսաղեմի առաջին թագավորներից, դրանք

<sup>4</sup> Մեր կաթոլիզմ, հայերեն բնագիրն ավելի վաղ է ձևավորվել, քանի որ Արա բազմաթիվ յուրահատկություններ առկա են Վահրամ Մարտուն «Պատմութիւն Ռութինեանց» Երկուու (տե՛ս Մամր Ժամանակագրություններ. XIII-XVIII դդ., Բա. II / կազմեց՝ Վ. Ա. Հակոբյան, Ե. 1956, Էջ 96-97):

<sup>5</sup> Հման. M. Grandclaudie, Classemement sommaire des manuscrits des principaux livres des Assises de Jérusalem - Revue historique de droit français et étranger 5, 1926, p. 418-475; Աճ՛ԾԿ, Étude critique sur les livres des Assises de Jérusalem, Paris, 1923.

Բացանելով մինչև ԺԵ դարի երկրորդ կես (Էջ 153-174): Հիշատակված ցանկերում բազմաթիվ վկայություններ կան հայկական իշխանական ընտանիքների և լատին խաչակիրների ամուսնական կապերի մասին:

Կիլիկիայի թագավորական ընտանիքի գավազանագրքի հնագույն լատինական ձեռագիրը (գրության ժամանակը՝ շուրջ 1369 թ.) Վատիկանի լատիներեն թ. 4789 մատյան է, որը Հայոց թագավորների ցանկը բերվում է Երուսաղեմի և Կիպրոսի թագավորների ազգաբանական ցանկերից հետո: Այդ բնագրական հատակուտորը հիշյալ ձեռագրում ընդունակված Երուսաղեմյան Ասիգների 334 հատվածն է, որը անվանված է «*Ce dit des rois de Ermenic. CCCXXXIII.*» (Այստեղ ասվում է Հայաստանի թագավորների մասին, 334): Հիշատակված հատվածում Կիլիկյան Հայաստանի իշխողների ցանկը սկսվում է հինգերորդ իշխան Թորոս Բ Ռուբինյանից (1148-1169): Այս ազգաբանական ցանկում առկա են մի շաբթ անճշտություններ. օրինակ՝ այստեղ ասվում է, որ Թորոս Բ իշխանը ժառանգ չի ունեցել, կամ որ Ռուբենը և Լևոնն իշխան Մլեհի որդիներն են, չգիտել Հեթում Ա-ի Ռուբեն որդուն և այլն: Հիշատակված անհամաձայնությունների հետ միասին հայերեն և լատիներեն բնագրերը գրեթե զուգահեռ են ընթանում, երբ հիշատակվում են միշպետական բնույթի ամուսնությունները և թվարկվում ժառանգների անունները:

Հայերենով պահպանված բնագրի (ՄՄ-1898) տեղանունները և անունները ներկայացնելիս տիկին Նիկղինը հաճախ շեղվում է բնագրային ընթերցումներից, ինչը նվազեցնում է հրատարակված ֆրանսերեն թարգմանության արժեքը (թեպետ բնագրային ընթերցումները հաճախ տրվում են տողատակում): Օրինակ, հրապարակվող բնագրին անհարի են Gürümze (ճիշտը՝ Կալրմաւզալ), Kastaravn (ճիշտը՝ Կաստաղալ), Anazarba (ճիշտը՝ Անարզարա կամ Անավարզա), Trois Arcs (ճիշտը՝ Դրազարկ), Edesse (ճիշտը՝ Ռուսիա), Toron (ճիշտը՝ Ռուրուն), Manyan (ճիշտը՝ Մանիոն) և այլն<sup>6</sup>: Երբեմն էլ տիկին Նիկղինը սրբագրում է թարգմանված բնագրի դրան խորթ անվանաձևերով. օրինակ՝ Rupin (ճիշտը՝ Ռուրին), Kakig (ճիշտը՝ Գագիկ), Adam (ճիշտը՝ Ատան) և այլն:

Ընդհանուր առմամբ տիկին Նիկղինը հիմնականում հաջողվել է գտնել անձնանունների և տեղանունների ֆրանսերեն տառադարձության բանալին, որը նրան առանց դժվարության թույլ է տվել նույնացնել տարբեր ազգաբանական ցանկերում հիշատակված անձնավորությունների: Հայերենով պահպանված բնագրի ֆրանսերեն թարգմանության ներգրավումով, ամեկանակած, նոր արժեք են ստացել Երուսաղեմի Ասիգներում պահպանված բնագրերը, թեպետ բերված բնագրերի հետազոտության բնագավառում դեռևս իրենց ասելիքը ունեն հայերենով պահպանված հիշատակարաններն ու հիշատակագրությունները, որոնց հետ համեմատությունը օրախնդիր հարց է: Տիկին Նիկղինի աշխատահրած հատորն արժեքավոր է ոչ միայն Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտության տեսանկյունից, այլ նաև նորույթ է հայ բնագրագիտության ասպարեզում: Հրապարակված բնագրերն ամերկնելի սկզբաղերյություններ են հայկական և եվրոպական ազնվականական ընտանիքների ազգակցական կապերի բացահայտման բնագավառում:

<sup>6</sup> Կիլիկյան տեղանունների ճշգրտման առումով նեղմակին ուղեցույց կարող էր լինել Ավստրիայի Գիտությունների Ակադեմիայի հրատարակած Kilikien und Isaurien von Fr. Hild und H. Hellenkemper, Teil 1-2, Wien 1990 (Tabula Imperii Byzantini 5) աշխատությունը: